



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

« 25 » ապրիլի 2019թ.

№ 283 -Լ

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի ԹԻՎ 798-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 702-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 13-րդ և 14-րդ ենթակետերով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ '

1. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2018 թվականի դեկտեմբերի 28-ի «Հաստատել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի գործերի կառավարման վարչության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 798-Լ հրամանով հաստատված հավելվածում (այսուհետ՝ Հավելված) կատարել հետևյալ լրացումները.

1) Հավելվածի 3-րդ կետը լրացնել նոր՝ 3.4 ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ՝

«3.4. Տնօրինման ենթակա ապրանքների հաշվառման և իրացման կազմակերպման բաժին:»

2) Հավելվածի 4-րդ կետը լրացնել նոր՝ 4.4 ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ՝

«4.4 Տնօրինման ենթակա ապրանքների հաշվառման և իրացման կազմակերպման բաժին

4.4.1. Իրականացնում է «Հրաժարում հոգուտ պետության» մաքսային ընթացակարգով ձևակերպված կամ մաքսային մարմինների կողմից ներկայացված դիմումի հիման վրա տիրազուրկ ճանաչված կամ դասական ակտի հիման վրա պետությանը հանձնված առգրավված կամ մաքսային մարմինների կողմից վերցված շուտ փչացող ապրանքների գույքագրում և հաշվառում:

4.4.2. «Հսկիչ գնումներով» ձեռք բերված ապրանքների հաշվառման, պահպանության և հանձնման աշխատանքների կազմակերպում:

4.4.3. Ապրանքների տեսակավորման, խմբավորման և տեղափոխման աշխատանքների կազմակերպում և իրականացում:


4.4.4. Ապրանքների գնահատման կազմակերպում:

4.4.5. Ապրանքների իրացման կազմակերպում:

4.4.6. Համապատասխան հաշվետվությունների կազմում և ներկայացում:

4.4.7. Այլ ընթացակարգերով տնօրինման ընդունված գույքի հաշվառման, պահպանության, գնահատման, իրացման կամ հանձնման աշխատանքների կազմակերպում:»

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

 Recoverable Signature

X 

VERIFIED OCSP 4/25/2019 16:06:05 GMT+4

Signed by: ANANYAN DAVIT 2010710142



Դ.ԱՆԱՆՅԱՆ